

U. II
2966

348

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱՆ ՆԱԽԿԻՆ
ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ 1961-1991ԹԹ

ԻԳ.00.04 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН ЖАННА АРУТЮНОВНА

ПОЛИТИКА ФРАНЦИИ В БЫВШИХ АФРИКАНСКИХ КОЛОНИЯХ 1961-1991 ГГ.

Диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 23.00.04- "Международные отношения"

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2022

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնում:
Գիտական ղեկավար՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Քաղ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ալեքսանյան
Պատմ.գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Սողոմոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. Սեպտեմբերի 30-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. օգոստոսի 19-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ  Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: д. ист. н., профессор А. Авагян

Официальные оппоненты: д. полит. н., профессор А. Алексанян

к. ист. н., доцент М. Согомонян

Ведущая организация: Российско-Армянский Университет


Защита диссертации состоится 30 сентября 2022 г. в 13:00 на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 " Политология и международные отношения " ВАК РА (Адрес : РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Афтореферат разослан 19 августа 2022 г.

Научный секретарь
специализированного совета 056,
к. ист. н., доцент

 В. С. Петросян



11-2966

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականություն: Թեմայի արդիականությունը պայմանավորվում է այն փաստով, որ նախկին գաղութներում համագործակցության մեխանիզմների ձևավորումը և նորանկախ պետությունների հետ հարաբերությունների կարգավորումը, իսկ այդ ճանապարհին առաջ քաշված մեխանիզմներն ու մեթոդները, որոնք 1961-1991թթ. Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից էին, ընկած են մերօրյա Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմքում, ուստի դրանց ուսումնասիրումը կարևոր է հասկանալու և գնահատելու Ֆրանսիայի այժմյան արտաքին քաղաքական ուղղությունը:

Աֆրիկյան քաղաքականությունն ուշագրավ է նրանով, որ Ֆրանսիան և՛ հյուսիսային, և՛ կենտրոնական, և՛ արևմտյան Աֆրիկայում ազդեցության պահպանման ուղղություններում որդեգրելով, փորձում է ամրապնդել իր դիրքերը միջազգային ասպարեզում: Համագործակցությունը նախկին գաղութների հետ Ֆրանսիային հնարավորություն է տալիս ապահովել քաղաքական և տնտեսական ազդեցությունը և ամրապնդել իր դիրքերը զարգացող աշխարհում, բարձրացնել Փարիզի հեղինակությունը Եվրոպայում և ԱՄՆ-ում: Այսպիսով, ֆրանկոֆոն Աֆրիկայում ազդեցության լծակների պահպանումը միջազգային հարաբերություններում ուժի կենտրոն հանդիսանալու Ֆրանսիայի հիմնական փաստարկներից մեկն է:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորվում է նաև նրանով, որ միգրացիոն քաղաքականությունը իր ազդեցության բարձրացմամբ կարևոր դեր է խաղում միջազգային հարաբերություններում: Ֆրանսիայում այս խնդիրը հիմնականում գոյացավ ապագաղութացման ընթացքում, որի արդյունքում բազմաթիվ ֆրանսիացիներ կամ խառը ամուսնության ընտանիքներ ստիպված եղան լքել նախկին գաղութներն ու տեղափոխվել մետրապոլիա, ինչպես նաև գաղութներից ժամանած մեծ քանակությամբ միգրանտներ համալրեցին աֆրո-ֆրանսիական համայնքի շարքերը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հանդիսանում է Ֆրանսիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, իսկ առարկան՝ աֆրիկյան նախկին գաղութները: Ֆրանսիայի քաղաքականության արդյունքում ի հայտ եկան քաղաքականության մշակման նոր մեթոդներ և մեխանիզմներ: Աշխատանքում հետազոտվում է Ֆրանսիայի աֆրիկյան

գաղութների ռազմավարական, քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում համագործակցության մեխանիզմների մշակման, փոխհարաբերությունների ձևավորման գործընթացները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսությունում նպատակ է դրվել ուսումնասիրել Ֆրանսիայի հարաբերությունները Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկայի պետությունների հետ, որոնք նախկինում ֆրանսիական գաղութներ էին հանդիսանում, այդ պետությունների նկատմամբ որդեգրած քաղաքական գիծը և փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Այս համատեքստում առանձնացվել են հետևյալ խնդիրների լուսաբանումը.

1. պարզել Հյուսիսային և «Սև» Աֆրիկայի՝ դերը Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունում,
2. պարզել ռազմական ճանապարհով անկախություն ձեռք բերած և խաղաղ պայմաններում անկախություն ստացած պետությունների՝ Ֆրանսիայի հետ հարաբերությունների առանձնահատկություններն ու զարգացման դինամիկան,
3. ուսումնասիրել Շառլ դը Գոլի աֆրիկյան քաղաքականության առաջնահերթությունները և առանձնահատկությունները, համեմատել Չորրորդ և Հինգերորդ հանրապետությունների «աֆրիկյան» քաղաքականությունը,
4. ուսումնասիրել աֆրիկյան նախկին գաղութների հետ համագործակցության մեխանիզմները,
5. ուսումնասիրել Հյուսիսային Աֆրիկայի պետությունների հետ փոխհարաբերություններում քաղաքական ազդեցության լծակների սակավությամբ պայմանավորված հիմնական շեշտը մշակութային և լեզվական համագործակցության բնագավառ տեղափոխելու ջանքերը,
6. ուսումնասիրել արտաքին քաղաքական ռազմավարությունը «Սև» Աֆրիկայում, Ֆրանսիայի ռազմական միջամտության քաղաքական և իրավապայմանագրային հիմքերը:
7. ԱՄՆ, ԽՍՀՄ, ՆԱՏՕ, տարածաշրջանում սոցիալիստական շարժման տարածման առանցքում «Սև» Աֆրիկայում սեփական

¹ Թեև այսօր «Սև» Աֆրիկա եզրույթը դուրս է լայնորեն կիրառման շրջանակներից, այդուհանդերձ ուսումնասիրվող ժամանակաշրջանի արխիվային և պաշտոնական փաստաթղթերում այն ունեցել է հենց այդ բնորոշումը, ուստի հիմք ընդունելով վերոնշյալը ատենախոսության մեջ տարածաշրջանը նշվում է հենց նույն եզրույթով:

դիրքերը պահելու և ամրապնդելու նպատակով որդեգրած մանևրելու քաղաքականության դրսևտրմներն ու արդյունքները,

8. պարզել միգրացիոն քաղականության հետևանքները Ֆրանսիայի համար,
9. մեկնաբանել ապագաղութացման ժամաշակից սկսած Ֆրանսիայի «փափուկ ուժի» քաղաքականության հիմքերն ու կիրառման մեխանիզմները,
10. բացահայտել Ֆրանսիայի գործիքային մշակութային քաղաքականության էությունը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը գիտական փորձ է՝ համակողմանիորեն ուսումնասիրելու 1961-1991թթ. Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում: Գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ մեկ հարթության վրա ուսումնասիրվում և առանձնացվում են Ֆրանսիայի արտաքին քաղաքականությանը հիմքում ընկած մեխանիզմները, որոնք ձևավորվեցին ապագաղութացման ժամանակաշրջանում՝ նպատակ ունենալով ծառայել Ֆրանսիայի ազգային շահերին և միջազգային ասպարեզում հեռահար նպատակների իրականացմանը: Վերջիններս Ֆրանսիայի Հանրապետության ձեռքում դարձան գործիքներ՝ ուղղված ազդեցության պահպանմանն ու միջազգային հեղինակության բարձրացմանը: Հաշվի առնելով այն, որ ատենախոսության մեջ օգտագործվել են Ֆրանսիայի ազգային արխիվի և Շառլ դը Գոլի համալսարանի փաստաթղթային արխիվի նորանոր նյութեր, որոնք տեսականորեն գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, թույլ են տալիս նորովի մեկնաբանել որոշ դրույթներ, ինչպես նաև նպատկում նախկինում եղած որոշ եզրահանգումների վերահիմնավորմանը: Ատենախոսության մեջ փորձել ենք հնարավորինս լրացնել գոյություն ունեցող բացը, քանի որ ֆրանկոֆոն Աֆրիկայի պետություններում առկա հիմնահարցերի հիմնական մասը արմատապես ձգվում են դեպի անցյալ՝ հետևաբար դրանց ծագման պատճառներն ու հետագա զարգացման առանձնահատկությունների բացահայտումը կարող է հնարավորություն ընձեռել ավելի լավ պատկերացում կազմել ներկայում ընթացող քաղաքական գործընթացների մասին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի՝ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են

գրախոսվող պարբերական գիտական հրատարակություններում հրապարակված հեղինակի գիտական հոդվածներում:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության արդյունքները կարող են օգտակար լինել Ֆրանսիայի քաղաքականության լուսաբանմանն ուղղված գիտական աշխատանքներ գրելիս, ինչպես նաև ստացված արդյունքները մեկտեղող հետազոտության նյութերը կարող են օգտագործվել բուհերի համար՝ որպես դասախոսությունների կազմակերպման հիմք:

Ատենախոսության մեթոդական հիմքը: Ատենախոսությունը շարադրված է արխիվային փաստաթղթերի, գիտական մենագրությունների և հոդվածների վերլուծության հիման վրա՝ փաստաթղթերի վերլուծության, կոնտենտ վերլուծության, պատմահամադրական, պատմահամեմատական և գործառնական մեթոդների կիրառմամբ:

Փաստաթղթերի վերլուծության, կոնտենտ վերլուծության պատմահամադրական մեթոդի կիրառմամբ ատենախոսության մեջ կատարվել է գիտական թեմային առնչվող աղբյուրների և տարբեր վերլուծական բնույթի նյութերի համակարգում, քննական վերլուծություն և վերջնական եզրահանգում, ինչն էլ հնարավորություն է տվել ատենախոսության մեջ քննարկված խնդիրները դիտարկել որպես մեկ ամբողջական համակարգ:

Պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրել և զուգահեռ վերլուծությունների հիման վրա լուսաբանել ֆրանս-աֆրիկյան հարաբերությունների զարգացման ընթացքն ու արմատական փոփոխությունների դրդապատճառները: Հետազոտության այս մեթոդը հատկապես արժեքավոր է իրար հետ չկապված, բայց զարգացման օրինաչափություններով միմյանց նման իրադարձությունների ծագումնաբանական հիմքերը, էական կողմերն ու առանձնահատկությունները պարզելու խնդրում: Դա հնարավորություն է տվել հասկանալու Աֆրիկյան մայրցամաքում իրադարձությունների ծագման պատճառներն ու դրսևորման օրինաչափությունները, ընդհանրացնելու ժամանակակից և պատմական փորձը, խուսափելու անցյալի և ներկայի միակողմանի արժևորումից:

Գործառնական մեթոդի կիրառմամբ հետազոտվել են այն մեխանիզմները, որոնք Ֆրանսիայի քաղաքական համակարգին հնարավորություն են տվել որոշ ոլորտներում ազդեցություն պահպանել աֆրիկյան տարածաշրջանում:

Հետազոտության ժամանակագրական հենքը: Աշխատանքը ընդգրկում է Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991

թվականները: Հենց այս ժամանակաշրջանում առաջ եկան Ֆրանսիայի արտաքին քաղաքականության առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ, որոնք համակարգային լուծման անհրաժեշտություն ունեին, քանզի Երկրորդ աշխարհամարտից հետո բացվել էր պատմության մի ժամանակաշրջան, երբ սկիզբ առավ ու լայնորեն տարածվեց ապագաղութացման շարժումը: Հետազոտության ժամանակագրային սկիզբը պայմանավորված է նրանով, որ 1960-ական թվականներին Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը մեծապես փոփոխությունների ենթարկվեց՝ կախված ապագաղութացման գործընթացի ծավալմամբ: Իսկ ուսումնասիրության ժամանակագրային ավարտը պայմանավորված է ԵՄ ստեղծմամբ, քանզի ԵՄ ստեղծումից հետո Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը Աֆրիկյան տարածաշրջանում մեծապես փոխվեց՝ կախված ԵՄ սկզբունքներով և Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությամբ:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և գիտական ուսումնասիրության աստիճանը: Ատենախոսության հիմնական առանցքն ու փաստական հիմքը ապահովում են ֆրանսիական արխիվային նյութերը, որոնց մի մասը գիտական շրջանառության է դրվել առաջին անգամ և որոնք հնարավորություն են ստեղծում ուսումնասիրել գործընթացների խորքային պատճառները: Արխիվային փաստաթղթերը լույս են սփռում նշված ժամանակահատվածում Ֆրանսիայի արտաքին քաղաքական օգնականության ձևավորման, «երրորդ աշխարհի» հետ հարաբերությունների կարգավորման սկզբունքներին ու գնահատականներին: Առանձնակի ուշադրության կարիք ունեն պետության ղեկավարների ֆոնդերի² ուսումնասիրությունը: Վերջիններիս շարքում կարևորվել են Շառլ դը Գոլ. Լոնդոն և Ալժիր³, Ֆրանսիայի Հանրապետության ժամանակավոր կառավարության⁴, Շառլ դը Գոլ. Հանրապետության նախագահ⁵, Ժոզեֆ Պոմպիդու. Հանրապետության նախագահ⁶, Վալերի Ժեսկար դ'Էստեն.

² Fonds publics postérieurs à 1789, SÉRIE AG Papiers des chefs de l'État, 3 AG 3 Archives de l'organe central des Forces françaises libres, 5 AG Foccart (FPR/FPU) Archives du secrétariat général pour les Affaires africaines et malgaches.

³ 3 AG 1 Charles de Gaulle: Londres et Alger.

⁴ 3 AG 4 De Gaulle, Gouvernement provisoire de la République française et " traversée du désert".

⁵ 5 AG 1 Charles de Gaulle, Président de la République (1959-1969), 5 AG 1 (fonds Élysée) 1 à 890. Archives de la présidence de la République, général de Gaulle (1959-1969). Répertoire numérique détaillé, par Nicole, Even, Paris, Archives nationales, 2012, 704 p.

⁶ 5 AG 2 Georges Pompidou (1969-1974), 5 AG 2 / 1 à 1165. Archives de la présidence de la République. Georges 5.2 Pompidou. 1969 1974. Rép. num. détaillé imprimé, par S. Bula, J. Irigoien et C. Obert, Paris, Archives nationales – Documentation française, 1996, 271 p., complété par P.

Հանրապետության նախագահ⁷, Ֆրանսուա Միտտերան. Հանրապետության նախագահ⁸ թղթապանակները: Անհրաժեշտ տեղեկատվություն է ապահովել նաև Աֆրիկայի և Մադագասկարի հարցերով գլխավոր քարտուղարի ֆոնդը⁹: Արխիվային նյութերի շարքում հիշատակության է արժանի ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների և հարակից կազմակերպությունների ֆոնդը և վերջինիս շարքում Մասնագիտացված գործակալությունների և հարակից կազմակերպությունների՝ Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցության թղթապանակը¹⁰:

Արխիվային փաստաթղթերն աչքի են ընկնում իրենց կոնկրետությամբ, զերծ են պոստֆակտում մեկնաբանություններից և ուսումնասիրողի առջև դրսևորվում են ժամանակի դրոշմով՝ ազատված հետահայաց գնահատականների սուբյեկտիվայնությունից:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքի կարևոր մասերից է նշյալ շրջանի թերթերի, օրաթերթերի ու ամսագրերի վերլուծությունը: Այս շարքում հիշատակելի են Կենտրոնաֆրիկյան Հանրապետության պաշտոնական հանդեսը¹¹, Գաբոնի Հանրապետության պաշտոնական հանդեսը¹², Ալժիրի Հանրապետության պաշտոնական հանդեսը¹³, Կոդ ր'իվուարի Հանրապետության պաշտոնական հանդեսը¹⁴: Օգտակար են եղել Le Monde (Աշխարհը) թերթի տարբեր տարիների

հրատարակությունները¹⁵: Թեմային աղերսվել են նաև Modern and Contemporary France (Ժամանակակից Ֆրանսիա)¹⁶, Peace Research (Խաղաղ հետազոտություն)¹⁷, Round table (Կլոր սեղան)¹⁸ հանդեսները:

Ատենախոսությունում օգտագործվել են հայերեն և օտարալեզու տարաբնույթ գիտական ուսումնասիրություններ: Ֆրանսիայի պատմությանն ու արտաքին քաղաքականությանն են նվիրված S. Ջվերևի, Ժ. Կարպատյեի և Ֆ. Լեբրենի, Յու. Ռուբինսկիի, Վ. Շադուրսկիի, Ն. Պոդգորնովայի, Բ. Ուիլիամի, Բ. Ստորայի աշխատությունները¹⁹: Խնդրո առարկա Աֆրիկյան մայրցամաքում Ֆրանսիայի քաղաքականության լուսաբանման համար առանցքային են եղել Կ. Ալեքսանդրի, Դ. Բենսուսանի, Հ. Տերասի, Ջ. Իլիֆի, Ջ. Աբուն-Նասրի, Թ. Շաֆերի անգլալեզու և ֆրանսալեզու աշխատությունները²⁰: «Ա» Աֆրիկայում Ֆրանսիայի քաղաքականության անքակտելի մաս հանդիսացող ռազմական միջամտությունների լուսաբանման համար օգտվել ենք այնպիսի կարևոր աշխատություններից, ինչպիսիք են Պ. Շանյոյի, Մ. Իրվինի, Ի Կոնովալովի աշխատությունները²¹:

¹⁵ Le Monde, 1966, 1969, 1978, 2003.

¹⁶ Journal of Modern and Contemporary France, Vol 4, 1996.

¹⁷ Journal of Peace Research. Oslo 1975.

¹⁸ Journal of Round Table, Vol 93, N 375.

¹⁹ **Зверев Г.В.**, Внешняя политика современной Франции, М., 2014; История Франции / Под общ. ред. Карпантье Ж, **Лебрена Ф., Карпантье Э**; Пер.с франц. М.Некрасова. СПб.: Евразия, 2008; **Рубинский Ю. И.**, Франция в поисках новых путей, Москва 2007; **Шадурский В.Г.**, Внешняя политика Франции (1945 - 2002), Минск 2004; **Подгорнова Н. П.**, Политика Франции в странах Северо-западной Африки, Москва 2015; **William B. Cohen**, Empereurs sans sceptre. **Levrault B.**, Histoire des administrateurs de la France d'outre-mer et de l'École coloniale, 1973, Stora B., Le mystere De Gaulle: Son Choix Poux l'Algerie (The Mystery De Gaulle: His Choice for Algeria) 2009.

²⁰ **Alexander K.**, "French Officials and the Insecurities of Change in Sub-Saharan Africa: Dakar, 19 August 1960 Revisited," in Francophone Africa at Fifty, 44-57. Former French Soudan retained the name Mali after the split, **Bensoussan D.**, Il était une fois le Maroc : témoignages du passé judéo-marocain, Éd. du **Lys**, 2010. ISBN 2-922505-14-6, **Henri Terrasse**, History of Morocco, Éd. Atlantides, 1952, Iliffe, J., 2007. Africans: The History of a Continent. Cambridge: Cambridge University, **Jamil M. Abun-Nasr**, A History of the Maghrib in the Islamic Period, Cambridge University Press, 1987. ISBN 9780521337670, **Tony Chafer**, The End of Empire French West Africa, University of Portsmouth, 2002.

²¹ **Chaigneau P.**, La politique militaire de la France en Afrique, Paris: Centre des Hautes Etudes sur L' Afrique et L'Asie Modernes, 1984, **Irwin M. Wall** France, the United States and the Algerian War. Berkeley, Los Angeles and London: University of California Press, 2001. pg. 335, ISBN 978-0-520-22534-3 Reviewed by **William D. Irvine** (Department of History, York University, Toronto, Canada), Published on H-Diplo (May, 2002, **Коновалов И.П.**, Военные операции Франции в Африке, Издательство: Центр стратегической конъюнктуры, 2014

Geneste et C. Noulet, Centre historique des Archives nationales, 2006 (édition électronique). Répertoire numérique en XML.

⁷ **5 AG 3 Valéry Giscard d'Estaing** (1974-1981), 5 AG 3 / 1 à 4722. Archives de la Présidence de la République. Valéry Giscard d'Estaing. 1974-1981. Rép. num. détaillé imprimé, par P. Geneste, assisté de V. Chatelain et G. Vitali, Archives nationales - Somogy, éditions d'art, 2007, 707 p, 5 AG 3 / 3510 à 3525 Rép. num. détaillé des tirages du service photographique de la présidence de la République, octobre 1978-mai 1981, par P. Geneste, 2006. Répertoire numérique en XML.

⁸ **5 AG 4 François Mitterrand** (1981-1995), 5AG 4. Archives de la présidence de la République. François Mitterrand. 1981-1995. Inventaire en cours de rédaction. Prendre rendez-vous auprès du département de l'Exécutif et du Législatif, 5 AG 4 / 12734 à 12741. Rép. num. détaillé des tirages du service photographique de la présidence de la République, mai 1981-décembre 1982, par S. Le Goëdec et D. Vaisse, 2006. Répertoire numérique en XML.

⁹ Archives du secrétariat général des Affaires africaines et malgaches et de la Communauté (1958-1974) AG/5(F)/1- AG/5(F)/4155.

¹⁰ L'Archives de l'ONU Fond 10 document N4 « Institutions spécialisées et organisations apparentées disposant de bureaux de liaison avec le Siège de l'ONU » sur www.un.org, consulté le 26 mai 2018.

¹¹ Journal officiel de la Repulique Centraafricaine. Enqui 1969-1987.

¹² Journal officiel de la Repulique du Gabon-Libreville 1969-1884.

¹³ Journal officiel de la Repulique d'Algerie -1969-1981.

¹⁴ Journal officiel de la Repulique de C.ote d'Ivoire - Anidjan, 1969-1982.

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործել ենք նաև այդ շրջանի պետական և քաղաքական գործիչների հուշերը, ինչպես օրինակ Շառլ դը Գոլի Ռազմական մեմուարները²², որտեղ հեղինակը ոչ միայն ներկայացրել է իր վարած քաղաքականության առանցքային կետերը, այլ նաև իր անձնական, երբեմն սուբյեկտիվ գնահատականները: Հատկանշական են այս ժամանակաշրջանի գործիչների ելույթների ընտրանիները, ժողովածուները և այլն²³: Դրանց շնորհիվ հնարավորություն է առաջանում անմիջականորեն ծանոթանալ նրանց քաղաքական մտածողությանը, քաղաքական առաջնահերթություններին ու խնդիրներին:

Հիշարժան են նաև համացանցային կայքերն ու տեղեկատվական բազաները, որոնց շարքում հատկապես նշելի են հետևյալ պաշտոնական կայք էջերը²⁴: Ի դեպ, անառարկելի է նաև Ֆրանսիայի Հանրապետության հեռուստաընկերությունների հաղորդումների ու ռեպորտաժների, համացանցում տեղադրված բազմաթիվ տեսագրությունների, հարցազրույցների, կոնֆերանսների, ելույթների, փաստավավերագրական ֆիլմերի կարևորությունը ատենախոսության շարադրման գործում: Ապահովելու համար աշխատանքի բազմակողմանիությունն ու հավաստիությունը և առավելագույնս ճիշտ ընկալելու համար ժամանակի

քաղաքական հարաբերությունները՝ ուսումնասիրվել են նաև նախագահների ելույթները, մամուլի ասուլիսները, հարցազրույցները:

Ատենախոսության թեմային աղերսվող հրապարակված գիտական հոդվածները եղել են առանձնակի ուսումնասիրության առարկա, որոնցից արժանի են հիշատակման Բ. Ռոժինի²⁵ և Վ. Ֆիլիպովի²⁶ հոդվածները:

Ուսումնասիրության ընթացքում ֆրանսալեզու, անգլալեզու, ռուսալեզու աշխատանքների հետ մեկտեղ օգտագործվել են նաև հայալեզու գիտական հոդվածներ, մասնավորապես՝ Շ. Կարամանուկյանի, Ս. Գրինյակի և Գ. Հարությունյանի, Ա. Փաշայանի, Ս. Սարյանի հոդվածները²⁷:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է բովանդակությունից, ներածությունից, որտեղ ներկայացված է աշխատանքի արդիականությունը, հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, մեթոդաբանական հիմքը, ժամանակագրական հատվածը, աղբյուրագիտական հենքը և գիտական ուսումնասիրության աստիճանը, առաջին, երկրորդ և երրորդ գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Առաջին գլուխը վերնագրվել է «Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագադրության առանձնահատկությունները և համագործակցության մեխանիզմների ձևավորումը» և բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին մասում ներկայացվել է գաղութային պատերը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ու աֆրիկյան գաղութներում քաղաքականության հիմնական ուղղությունները, ապագադրացման քաղաքականությունն ու դրա տնտեսական ու քաղաքական հետևանքները, ապագադրացման առանձնահատկությունները, այն մեկնաբանվել գաղութային ժողովուրդների կողմից քաղաքական անկախության

Глава 1./ с.14.

²² **Де Голль Ш.**, Военные мемуары: Призыв 1940-1942 / Шарль де Голль; Пер. с фр. Анфилофьева А.А., Арзуманова Ю.Б., Гак В.Г. и др. М.: ООО «Издательство АСТ»: ООО «Издательство Астрель», 2003. 814(2) с.: 9 карт (Военно-историческая библиотека), de Gaulle Ch. Mémoires de guerre. V.1 L'Appel 1940-1942. Paris, 1954. V.2. L'Unité. 1942-1944. P., 1956; Le Salut. 1944-1946. P., 1959.

²³ **Discours du plan de Constantine**, le 3 octobre 1958, **Discours à Saint-Louis du Sénégal**, Allocution de bienvenue adressée à **Jean-Bedel Bokassa**, **Allocution radio-télévisée** du 27 juin 1958, prononcée à l'Hôtel Matignon, **Allocution radio-télévisée** du juillet 1958 prononcée à Alger, **Allocution radio-télévisée** prononcée au palais de l'Élysée le 16 septembre 1959: **Charles de Gaulle Discours à Dakar**, Conférence de presse du 5 septembre 1960, **Discours de Brazzaville**, Date de diffusion: 01 janvier 1981, Date d'événement: 30 janvier 1944, **Discours de Brazzaville**, Date de diffusion: 01 janvier 1981, Date d'événement: 30 janvier 1944, **Discours du 23 avril 1961, Habib Bourguiba**, "Une Double Ouverture Au Monde" (Montréal, May 11, 1968), in Papa Alioune Ndao, Francophonie des "Pères fondateurs" (Éditions Karthala, 2008), 160-161. <https://gerflint.fr/Base/AmeriqueduNord1/Bourguiba.pdf>, **Berstein S.**, Déclaration du 18 mars 1962 (cessez-le-feu en Algérie), Éclairage, <http://fresques.ina.fr>, La semaine des barricades à Alger, <http://fresques.ina.fr>, **Berstein S.**, **Allocution radio-télévisée** du 27 juin 1958, Éclairage **Berstein S.**, Une Communauté enclavée dans la nouvelle République, 23 oct 1958.

²⁴ www.charles-de-Gaulle.org, www.aljazeera.com, www.francophonie.org, www.conseil-constitutionnel.fr, www.lemonde.fr, www.wildmadagaskar.org, www.diplomatie.gouv.fr, www.europa.eu.

²⁵ **Рожин Б.**, Франция и Африка: современный колониализм, Журнал "Политика" 2016, Москва.

²⁶ **Филиппов В.Р.**, Африканская политика Франсуа Миттерана // Мировая политика. 2017. № 1, с. 81 - 94.

²⁷ **Փաշայան Ա.**, «Իսլամի արմատականացումը Արևմտյան Եվրոպայում», Նորավանք գիտակրթական հիմնադրան, 2005 http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=890, **Կարամանուկյան Շ.**, Արաբական պետությունների Լիզան և Մադրիդի ժողովուրդների պայքարը ազգային անկախության համար (1945-1956), 2013, <http://lraber.asj-oa.am/4781/>, **Գրինյան Ս.**, **Հարությունյան Գ.** «Աֆրիկյան աշխարհամասի իրադարձությունները մեծ խաղի հայելում», «21-րդ ԴԱԴ», թիվ 3 (37), 2011թ, **Սարյան Ս.**, «Նախագահական ընտրությունները Ֆրանսիայում», 2007թ http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=801, հասանելի է առ 01.06.2019:

ծեռքերման տարբեր ձևերով: Նախկին գաղութներից շատերն անկախություն ստացան հարաբերականորեն խաղաղ ճանապարհով: Մյուսները բռնեցին սեփական ուժերով ազատագրման ուղին, որով էլ սկսվեց ազատագրման և անկախացման գործընթացը՝ ունենալով զգալի հաջողություններ: Վիետնամի և Ալժիրի օրինակով ցույց է տրվել Ֆրանսիայի քաղաքականության ձախողումը և հետագայում նրանց հետ հարաբերությունների կարգավորման բարդությունները, քանզի այն պետությունները, որոնք անկախության հասան պայքարի արդյունքում, զրկեցին Ֆրանսիային ազդեցության լծակների հնարավորությունից: Մինևս ժամանակ ներկայացվել է խաղաղ ճանապարհով, բանակցությունների արդյունքում անկախություն ստացած գաղութներում Ֆրանսիայի ազդեցության լծակների հնարավորությունները: Ընդհանուր առմամբ դը Գոլի կառավարությունը ջանքեր էր գործադրում նախկին ազդեցությունը չկորցնելու, դեռ ավելի, խորացնելու համար:

Առաջին գլխի երկրորդ մասում ներկայացվել է Ֆրանսիայի նպատակները Հյուսիսային և Կետրոնական Աֆրիկայում և համագործակցության մեխանիզմների ձևավորումը: Ֆրանսիայի նպատակը՝ մեկ ընդհանուր քաղաքական դաշտում միավորել նախկին աֆրիկյան պետություններին, ունենալ ազդեցության լծակներ, ապահովել մշտական ներկայություն, համագործակցության անվան տակ շարունակել նեոգաղութային քաղաքականությունը, ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել աֆրիկյան նախկին գաղութների հետ հարաբերությունները, կրճատել մայրցամաքում օտարերկրյա միջամտությունների վտանգը, վերահսկել նախկին գաղութների տնտեսությունը, իրականացնել մշակութային արժեքների տարածում և դրանց հաշվին դիրքերի պահպանման քաղաքականություն: Ներկայացվել է այդ նպատակների իրագործման համար Ֆրանսիայի՝ գաղութների հետ համագործակցության մեխանիզմները և աֆրիկյան պետությունների շահերը: Այդպիսի մեխանիզմ էր նախ Սահմանադրությունը, ապա Ֆրանս-աֆրիկյան Միությունը, Ֆրանկաֆրիկա գաղափարը, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը, նախագահական փոխայցերը և ռազմական միջամտությունները: Քննարկվող մեխանիզմները արդյունավետության գնահատման տեսակետից անդրադարձ է կատարվել նաև հետգաղութային ժամանակաշրջանում Աֆրիկյան պետությունների Ֆրանսիայի հետ հանագործակցության շարժառիթներին: Աֆրիկյան նախկին գաղութների մի մասը, գիտակցելով Ֆրանսիայի հեռահար նպատակները և ֆրանկաֆոն Աֆրիկյան՝ անկախության քողի տակ կիսագաղութային կարգավիճակում պահելու Ֆրանսիայի ծրագիրը, փորձում էին չմտնել Ֆրանսիայի հետ համագործակցային դաշտ: Իսկ մյուս մասն էլ, այդ ամենը գիտակցելով, սակայն, հաշվի առնելով քաղաքական և

տնտեսական կախվածությունը Ֆրանսիայից՝ համաձայնում էին ինտեգրվել Ֆրանսիայի առաջարկած մեխանիզմներին:

Երկրորդ գլուխը վերնագրվել է «Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1970-1991թթ.» և բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին մասում ներկայացվել է նշյալ ժամանակահատվածում Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը Մադրիբի արաբական պետություններում: Անդրադարձ է կատարվել նաև այն դժվարություններին, որոնց բախվում էր Ֆրանսիան պայքարի ճանապարհով անկախացած Հյուսիսաֆրիկյան պետությունների հետ փոխհարաբերությունների կառուցման ընթացքում և ներկայացվել մշակութային և լեզվական քաղաքականության հիմքերն ու հետևանքները:

Հաջորդ ենթաբաժնում ներկայացվել է Ֆրանսիայի՝ «Սև» Աֆրիկայի պետությունների նկատմամբ քաղաքական գիծը, տնտեսական քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում: Վերլուծվել են համագործակցությունների քաղաքական, տնտեսական և իրավապայմանագրային հիմքերը, ռազմաբազաների տեղակայման դրդապատճառները և ռազմական միջամտությունների հիմնական նպատակները և դրանց հետևանքները: Ֆրանսիայի աֆրիկյան նախկին գաղութները հարուստ են բնական ռեսուրսներով և հետգաղութային շրջանում դրանցից օգտվելը կարևոր էր Ֆրանսիայի տնտեսության համար: Հանգամանայից ներկայացվել է նաև այն հանգամանքը, որ Ֆրանսիայի՝ համեմատաբար ազատ գործելը պայմանավորված էր նաև այլ խաղաղոցների բացակայությամբ: Ենթազխում անդրադարձ է կատարվել Ֆրանսիայի միգրացիոն քաղաքականությանը, «Սև» Աֆրիկայի պետություններին հատկացվող ֆինանսական աջակցության քաղաքականությանը և ԵՄ ստեղծումից հետո ընդհանուր եվրոպական քաղաքականության ազդեցությունը Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունների վրա:

Երրորդ գլուխը վերնագրվել է «Ապագաղութացման ժամանակաշրջանից սկսած Ֆրանսիայի Հանրապետության փափուկ ուժի ռազմավարությունը (Ֆրանսիական մշակույթ)»: Այն բաղկացած է երկու ենթագլխից, առաջին մասում ներկայացվել է մեծ տերությունների քաղաքականությունը որպես հակակշիռ աֆրիկյան նախկին գաղութներում Ֆրանսիայի գերիշխող քաղաքական խաղաղոցի կարգավիճակին: Ներկայացվել է մասնավորապես ԱՄՆ, ԽՍՀՄ և Չինաստանի շահերը, վերջիններիս նկրտումներն ու նպատակները և դրանց ֆոնին՝ Ֆրանսիայի Հանրապետության «փափուկ ուժի» քաղաքականությունը և ԵՄ քողի տակ այն առաջ տանելու մեխանիզմներն ու ուղղությունները, ներկայացվել է ԵՄ ստեղծումից

հետո Ֆրանսիայի Հանրապետության քաղաքականության փոփոխությունները: Երրորդ գլխի երկրորդ մասում ներկայացվել է Ֆրանսիայի Հանրապետության գործիքային մշակութային քաղաքականությունը, մշակութային քաղաքականության գործիքայնացումն էլ բերեց մշակութային քաղաքականության ինստիտուցիոնալացման և ստեղծվեցին հատուկ այդ նպատակի համար կազմակերպություններ մասնավորապես անդրադարձ է կատարվել ֆրանսերեն լեզվին, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը, Ալյանս Ֆրանսեզին, Ֆրանսիական համալսարանների ցանցին, վերջիններս ներկայացվել որպես «փափուկ ուժի» գործիքներ:

Եզրակացությունում ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Թե՛ ռազական, թե՛ տնտեսական տեսանկյունից թուլացած Ֆրանսիայի Հանրապետության համար՝ Երկրորդ աշխարհամարտից հետո լայն տարածում ստացած ապագադրության գործընթացը անհետևանք չմնաց:

2. Գաղութները իրենց անկախացման ձեռք բերման պայքարում հովանավորվում էին ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և ՄԱԿ-ի կողմից: Վերջինիս շրջանակներում «ժողովուրդների ինքնորոշման» գաղափարն արժանացավ առանձնահատուկ ուշադրությանը: Մադրիբի արաբական ժողովուրդների ֆրանսիական գաղութարարների դեմ մղված պայքարին ուշադրություն էր դարձնում 1945 թվականին հինադրված արաբական անկախ պետությունները միավորող միջպետական տարածաշրջանային կազմակերպությունը՝ Արաբական պետությունների լիգան:

3. Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունն Աֆրիկայում տարբերվում էր Մեծ Բրիտանիայի քաղաքականությունից. Մեծ Բրիտանիայի աղութային քաղաքականությունը ուղղված էր իր աֆրիկյան գաղութների տնտեսական շահագործմանը, այն ինչ ֆրանսիական քաղաքականությունն ուղղված էր մշակութային և քաղաքական ծուլմանը: Ֆրանսիայի ծուլման քաղաքականությունը արգելում էր տեղացի ժողովուրդների լեզուները, մշակույթը, ինքնությունը: Մեծ Բրիտանիան իր գաղութներին նայում էր որպես օտար հողեր, իսկ Ֆրանսիան՝ որպես իր մի մասնիկ: Դեռ ավելին, Ֆրանսիան պարտադրում էր իր գաղութների ժողովուրդներին ֆրանսիական մշակույթ: Հարկ է հաշվի առնել, որ Ֆրանսիան, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, որն իր ազդեցությունն ուներ հետպատերազմյան աշխարհակարգի վրա, հանդես էր գալիս պարտվողի հոգեբանությամբ:

4. Վերլուծելով ֆրանսիական գաղութների ազգային-ազատագրական

պայքարը՝ կարելի է նշել, որ ապագադրությանը տեղի է ունեցել երկու ճանապարհով, որոնք պայմանականորեն կարելի է անվանել՝ վիետնամալժիրյան, այսինքն ռազմական ճանապարհով մետրոպոլիային պարտության մատնելու ու անկախություն հռչակելու և «Սև» Աֆրիկայի՝ այսինքն՝ բանակցությունների արդյունքում մետրոպոլիայի կողմից անկախության տրամադրելու ճանապարհով: Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մետրոպոլիային պարտության մատնած նորանկախ պետությունները ձեռք բերեցին լիիրավ անկախություն Ֆրանսիայից՝ վերացնելով նրա որևէ ազդեցության հնարավորությունը այս կամ այն համագործակցության մեխանիզմի միջոցով իրեն շահավետ պայմաններով հարաբերություններ պարտադրելուն: «Տրամադրված» անկախությամբ պետություններում Ֆրանսիային հաջողվեց ոչ միայն պահպանել իր ազդեցությունը, այլ նաև տարաբնույթ երկկողմ պայմանագրերի միջոցով ներքին գործերին միջամտելու, ընդհուպ մինչև ռազմական ինտերվենցիա, իրավունք ձեռք բերել: Այն պետություններում, որոնք համաձայնեցին Ֆրանսիայի առաջարկին՝ մտնել Ֆրանսիական Համայնքի մեջ որպես անկախ պետություններ, Ֆրանսիան պահպանեց իր ազդեցության լծակները և անում էր ամեն ինչ այն չկորցնելու, դեռ ավելին, խորացնելու համար:

5. Մադրիբի ֆրանսիական գաղութների ժողովուրդների համար օրինակ հանդիսացավ Ֆրանսիայի պարտությունը Հնդկաստանում: Մարոկկոն, Ալժիրը և Թունիսը՝ որպես օրինակ ունենալով Հնդկաստանի դեպքերը, դիմեցին ազգային ազատագրական մարտերի՝ Ֆրանսիայի տիրապետությունից ազատվելու համար: Հետպատերազմյան շրջանում Մադրիբի ժողովուրդների մղած ազատագրական պայքարին նպաստող գործոններից մեկն էլ «Արաբական միասնականության շարժման ամրապնդումն» ու «Արաբական պետությունների լիգայի» ստեղծումն էր:

6. Խաղաղ ճանապարհով անկախություն ձեռք բերած գաղութների նկատմամբ Շառլ դը Գոլը վարում էր փոխզիջման քաղաքականություն՝ կարևորելով փոխարդյունավետ տնտեսական համագործակցությունը նոր ձևավորվող երրորդ աշխարհի երկրների հետ: Նա նպատակ ուներ ստեղծել կարծրատիպ, համաձայն որի Ֆրանսիան պատրաստ է աջակցել կայունացման ուղին բռնած ցանկացած երկրի: Նման կարծրատիպի արտահայտություն էր Ֆրանսիական Համայնքի գաղափարախոսությունը:

7. Ֆրանսիայի՝ աֆրիկյան գաղութների ապագադրության գործընթացը աչքի էր ընկնում մի շարք յուրահատկություններով: Այսպես՝ պետական անկախության շնորհիվ չէր նշանակում տնտեսական անկախության ձեռքբերում: Աֆրիկայի նորանկախ պետությունների կախվածությունն արտաքին առևտրից

բերեց նրան, որ իշխանությունը շարունակում էր իր ձեռքում պահել տեղական առևտրական վերնախավը, որը լուրջ շահույթներ էր ստանում ներմուծվող ապրանքների վաճառքից: Նորանկախ պետություններից շատերը կորցրին ֆրանսիական նախկին շուկաները, քանզի Ֆրանսիան էր ապահովում իրենց մուտքը այդ շուկաներ: Արդյունքում նախկին գաղութների մասնաբաժինը միջազգային ապրանքաշրջանառության մեջ նվազեց:

8. Գաղութային համակարգի փլուզումը անդրադարձավ նաև Ֆրանսիայի տնտեսության վրա: Նախկին գաղութներից բնակչության ներգաղթի արդյունքում փոխվեց Արևմտյան Եվրոպայի երկրների բնակչության ազգային կազմը: Հիմնականում անօրինական ներգաղթողների ներհոսքն իր հետ բերեց նաև լուրջ տնտեսական խնդիրներ՝ կապված աշխատատեղերի հետ:

9. Ֆրանսիայի աֆրիկյան տարածքների անկախությունից հետո օրակարգ էր նետվում նոր քաղաքական մարտահրավեր. այն է՝ համագործակցության եզրեր գտնել նախկին գաղութների հետ: Ֆրանսիայի նպատակներն էին. մեկ ընդհանուր քաղաքական դաշտում միավորել ֆրանկաֆոն աֆրիկյան պետություններին, ունենալ ազդեցության լծակներ, ապահովել մշտական ներկայություն, համագործակցության անվան տակ շարունակել գաղութային քաղաքականությունը, ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները, կրճատել իր ազդեցության տարածքում օտարերկրյա միջամտությունների վտանգը, վերահսկել նախկին գաղութների տնտեսությունը, իրականացնել մշակութային արժեքների տարածում և դրա հաշվին ազդեցության ամրապնդում Ֆրանսերեն լեզվի միջոցով:

10. Ապագաղութացման ընթացքում դը Գոլի կառավարության վարած քաղաքականության առանձնահատկություններից էր նախկին գաղութների հետ համագործակցության և իր ազդեցության տակ պահելու համար մեխանիզմների ստեղծման փորձերը: Հաճախ նախկին գաղութները ողջունում էին նման գարգացումները, քանի որ գաղութային համակարգի տարբեր հատվածների միջև ձևավորվել էին առևտրատնտեսական հաստատուն կապեր, ինչը խզելը նպատակահարմար չէր: Գաղութների ժողովուրդն ունեին ընդհանուր մշակութային ժառանգություն և աշխարհայացքային ընդհանրություններ, որ նրանց թույլ էր տալիս գիտակցել մեկուսացման բացասական հետևանքները:

11. Իր նպատակների իրականացման համար Ֆրանսիան որդեգրեց համագործակցության մեխանիզմների միջոցով Ֆրանկոֆոն Աֆրիկայում իր ազդեցության և ռազմավարական նշանակություն ունեցող տարածություններում վերահսկողության պահպանումը շարունակելու քաղաքականություն: Ազդեցության

պահպանման համագործակցության ֆրանսակենտրոն մեխանիզմներն էին ա/ **Ֆրանս-աֆրիկյան միությունը**. «Ֆրանս-աֆրիկյան միության» ստեղծումը դարձավ ապագաղութացման քաղաքականության գործիք, քանզի Ֆրանսիան ցանկանում էր Միության կազմում տեսնել աֆրիկյան արդեն «նախկին» գաղութներին՝ որպես ինքնուրույն պետություններ, որոնք, սակայն, կմնային Ֆրանսիայի վերահսկողության տակ: Միությունն, ընդհանուր առմամբ կարելի է համարել Շառլ դը Գոլի Սահմանադրության արդյունք: Ժամանակակիցների կարծիքով այն, ուղղակի դիսինտեգրացիայից պաշտպանվելու միջոց էր՝ Ֆրանսիան դե յուրե ճանաչեց իր նախկին գաղութների անկախությունը, բայց դե ֆակտո շարունակում էր համակարգել գաղութների գործունեությունը, այսինքն գաղութների կյանքին ուղղակի միջամտությունը փոխվեց անուղղակի միջամտությամբ:

բ/ **Ֆրանկաֆրիկյան (Françafrique)**. Հինգերորդ Հանրապետության հիմնադիր-նախագահ Շառլ դը Գոլը, իր համախոհների և Աֆրիկյան առաջնորդների հետ ստեղծեց Ֆրանկաֆրիկա (Françafrique) կառույցը, որն աֆրիկյան պետությունների անկախությունից հետո համագործակցության նոր հարթակ էր Ֆրանսիայի և իր նախկին գաղութների միջև: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանկաֆրիկայի գաղափարի ստեղծումը կարելի է համարել համագործակցության հարթակ, որն իրենից ենթադրում էր Ֆրանսիայի գաղութային քաղաքականության շարունակություն. այլ կերպ ասած, այն անկախացած գաղութների հետ Ֆրանսիայի հատուկ հարաբերությունների կարգավորման դաշտ էր:

գ/ **Ֆրանսերեն լեզուն**. գաղութատիրական ժամանակաշրջանում ֆրանսերեն լեզվի տարածումը աֆրիկյան մայրցամաքում Ֆրանսիայի համար ռազմավարական տեսակետից անհրաժեշտություն էր և համարվում էր ամենաաշխատող մեխանիզմներից մեկը և այն ապագաղութացման շրջանում ևս շարունակում էր մնալ առաջնայնությունների շարքում: Խթանելով ֆրանսերեն լեզվի տարածումը՝ Ֆրանսիան նպաստում էր աֆրիկացիների կրթական մակարդակի բարձրացմանը, սակայն վերջիններիս կրթելու և ֆրանսերեն սովորեցնելու վերջնական նպատակը ոչ թե նրանց զարգացած տեսնելն էր, այլ Ֆրանսիայի մշտական ներկայության ու ազդեցության ապահովումն էր:

դ/ **Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն**. այս կազմակերպության ստղծումով Ֆրանսիան ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրեց աֆրիկյան նախկին գաղութներում իր քաղաքականությունը: Այս կազմակերպության ստեղծման հեռահար նպատակն էր մեկ ընդհանուր հարթության մեջ ներառել աֆրիկյան նախկին գաղութներին, պահել վերջիններիս Ֆրանսիայի տեսադաշտում, ուղղակի

ազդեցություն ունենալ վերջիններիս արտաքին և ներքին քաղաքականության վրա և ապահովել ազդեցության ոլորտներ: Կազմակերպությունը լեզվական և մշակութային հիմքով էր՝ հետագա քաղաքական ու տնտեսական համագործակցության տեսլականով:

ե/ **Ռազմական միջամտությունները.** այս մեխանիզմով Ֆրանսիան կարողանում էր ազդեցություն ապահովել հիմնականում այն աֆրիկյան նախկին գաղութներում, որոնք անկախացել էին ոչ թե պայքարի ճանապարհով, այլ Ֆրանսիայի կողմից անկախության տրամադրմամբ: Այդպիսիք եղան «Սև» Աֆրիկայի երկրները, որտեղ Ֆրանսիան հիմնում էր ռազմաբազաներ, անհատեղության դեպքում իրականացնում ռազմական միջամտություններ, պահում մշատական ներկայությունը, սակայն, այս ամենը Ֆրանսիային հաջողվում էր, քանզի, ըստ էության, տարածաշրջանում բացակայում էր երրորդ ուժի գործոնը, ինչը Ֆրանսիային միանձնյա գործելու հնարավորություն էր տալիս:

զ/ **Նախագահական փոխայցեր.** աֆրիկյան տարածաշրջանում իր երբեմնի ազդեցության պահպանման մեղանիզմներից էր նաև նախագահական փոխայցերը: Հինգերորդ Հանրապետության կառավարությունը բարեկամական այցերով փորձում էր շեշտել Աֆրիկայի առաջնայնությունը ֆրանսիայի արտաքին քաղաքականությունում:

12. 1970 թվականից, կախված Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ստեղծմամբ, փոխվեցին նաև Ֆրանսիայի քաղաքականության հիմնական շեշտադրումները: Հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ որդեգրած արտաքին քաղաքական ռազմավարությունում և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ ռազմական, և՛ միգրացիոն քաղաքականության կիրառման ոլորտներում Ֆրանսիան հիմնականում ձախողում էր: Միակ առանցքը, որը իրոք կապում էր Ֆրանսիան Հյուսիսային Աֆրիկայի պետությունների հետ և որոշակի դիվիդենտներ ու ազդեցության լծակներ տալիս՝ դա մշակութային, կրթական, լեզվական քաղաքականություն էր:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ֆրանսիայի քաղաքականությունը Հյուսիսային Աֆրիկայում 1970-1990-ական թվականներին, կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիան «ձախողված էր» Հյուսիսային Աֆրիկայում քանի որ այլևս չէր կարող ունենալ ազդեցության լծակներ ներքին գործերում, ուստի մնում էր սահմանափակվել տնտեսական և առևտրային ոլորտում այս կամ այն համագործակցությամբ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության միջոցով մշակութային, լեզվական կապերի ամրապնդմամբ, և ուժերը կենտրոնացնել «Սև» Աֆրիկայում իր դիրքերի պահպանման ու ամրապնդմանը:

13. «Սև» Աֆրիկայում Ֆրանսիային հաջողվեց ապահովել մշտական ներկայություն, ազդեցության դաշտ և երկրների ներքին ու արտաքին գործերին միջատելու հնարավորություն: Ֆրանսիան այն իրականացնում էր ռազմական ներխուժումների ճանապարհով: Սակայն հարկ է շեշտել, որ այս ամենը Ֆրանսիան իրականացնում էր փոխադարձ կնքված պայմանագրային հիմքով՝ օրինականացնելով իր ռազմական ներկայությունը տարածաշրջանում:

14. Պայմանավորված այն հանգամանքով, որ Աֆրիկյան տարածաշրջանում բախվում էին նաև այնպիսի գերտերությունների շահեր, ինչպիսիք էին ԱՄՆ, ԽՍՀՄ և Չինաստանը՝ Ֆրանսիայի առջև ծառայած մարտահրավերները մեծապես փոխեցին աֆրիկյան նախկին գաղութներում վերջինիս քաղաքականության էությունը: Ֆրանսիան անցում կատարեց բազմակողմ քաղաքականության՝ այն պայմանավորելով ԵՄ ստեղծմամբ և Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությամբ: ԵՄ ստեղծումից հետո Ֆրանսիան, որդեգրելով ԵՄ արժեքներն ու սկզբունքները, փոխեց իր քաղաքականության շեշտադրումները աֆրիկյան նախկին գաղութներում՝ անցում կատարելով «փափուկ ուժի» կիրառմանը:

15. Ֆրանսիայի համար «փափուկ ուժի դրսևումներ էին ֆրանսերեն լեզուն և ֆրանսիական մշակույթը, որոնք մեծ ծախսեր և ռեսուրսներ էին պահանջում: Ֆրանսիան մեծապես լծվեց այս նպատակի իրականացմանը, քանզի վերջիններս հրաշալի գործիքներ էին արտաքին մշակութային քաղաքականության իրականացման, իսկ հետագայում արդեն քաղաքական ու տնտեսական ազդեցության հող նախապատրաստելու համար:

16. Մշակութային քաղաքականության գործիքայնացումն էլ բերեց մշակութային քաղաքականության ինստիտուցիոնալացման և ստեղծվեցին հատուկ այդ նպատակի համար կազմակերպություններ, ինչպիսիք էին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը, Ալյանս Ֆրանսեզը, Ֆրանսիական համալսարանների ցանցը: Այս կազմակերպությունները ունեին լեզվական և մշակութային հիմք, սակայն պարարտ հող էին նախապատրաստում քաղաքական հարաբերություններում Ֆրանսիական ներկայության ապահովման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աֆրիկայում Ֆրանսիայի գաղութային քաղաքականության հիմքերը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, Երևան 2016, էջ 103-112:
2. Շառլ դը Գոլի ալժիրյան քաղաքականության արդյունքը, Լրաբեր

համարակական գիտությունների, Երևան 2017, էջ 63-72:

3. Աֆրիկյան մայրցամաքում Ֆրանսիայի ռազմական միջամտության քաղաքականության հիմքերը, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, Երևան, 2017, էջ 91-98:
4. Շառլ դը Գոլի աֆրիկյան քաղաքականության առաջնահերթությունները, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան 2017, էջ 310-316:
5. ԵՄ ազդեցությունը ֆրանս-աֆրիկյան քաղաքական և տնտեսական հարաբերությունների վրա, Գիտական Արցախ, համար 1(2), Երևան 2019, էջ 90-96:
6. Աֆրիկյան նախկին գաղութների հետ Ֆրանսիայի համագործակցության մեխանիզմները, Տարածաշրջան և աշխարհ, համար 4, Երևան 2019, էջ 35-40:
7. Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը Հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ, Գիտական Արցախ, համար 3(6), Երևան 2020, էջ 105-111:
8. Ֆրանսիայի նպատակները աֆրիկյան մայրցամաքում և վերջինիս հետ աֆրիկյան պետությունների համագործակցության շարժառիթները, Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, համար 11(01), Երևան 2020, էջ 566-576:
9. Ֆրանսիայի աֆրիկյան նախկին գաղութները մեծ տերությունների ուշադրության կենտրոնում, Բամբեր Երևանի համալսարանի, 2021, No 3, 55-60:

АРУТЮНЯН ЖАННА АРУТЮНОВНА

ПОЛИТИКА ФРАНЦИИ В БЫВШИХ АФРИКАНСКИХ КОЛОНИЯХ 1961-1991 ГГ.

Диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 23.00.04- "Международные отношения".

Защита диссертации состоится 30 сентября 2022 г. в 13:00 на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 " Политология и международные отношения " ВАК РА (Адрес : РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1).

РЕЗЮМЕ

Актуальность темы определяется тем, что формирование механизмов сотрудничества в бывших колониях и регулирование отношений с новыми независимыми государствами, а также выдвигаемые на этом пути механизмы и методы, которые в 1961-1991 годах были одним из основных направлений внешней политики Франции, составляют основу ее сегодняшней внешней политики, поэтому их изучение важно для понимания и оценки современной внешнеполитической стратегии Франции.

Объектом исследования является внешняя политика Французской Республики, а предметом - бывшие африканские колонии. Целью диссертации является изучение отношений Франции с государствами Северной и Центральной Африки, бывшими французскими колониями, политической линии по отношению к этим государствам и особенностей этих отношений. Диссертация представляет собой попытку научного комплексного изучения политики Франции в бывших африканских колониях 1961-1991 годов.

Научная новизна состоит в том, что впервые на одном уровне изучаются и выделяются глубинные механизмы внешней политики Франции, сформировавшиеся в период деколонизации, с целью служения национальным интересам Франции и реализации долгосрочных целей на международной арене. Диссертация написана на основе анализа архивных документов, научных монографий и статей с использованием документального анализа, контент-анализа, историко-сопоставительного, историко-сравнительного и операционального методов.

Главную ось и фактологическую базу диссертации составляют французские архивные материалы, некоторые из которых введены в научный

оборот впервые. Диссертация состоит из оглавления, введения, первой, второй и третьей глав, заключения и списка литературы.

Первая глава называется «Деколониальные особенности французских африканских колоний и формирование механизмов сотрудничества» и состоит из двух подразделов. В первой части представлен колониальный образ конца Второй мировой войны. Во второй части первой главы представлены цели Франции в Северной и Центральной Африке и формирование механизмов сотрудничества.

Вторая глава называется «Стратегия внешней политики Франции в бывших африканских колониях в 1970–1991 годы» и состоит из двух подразделов. В первой части представлена внешнеполитическая стратегия Франции в арабских государствах Магриба в указанный период. Во второй части представлена политическая линия Франции в отношении государств «Черной Африки» и экономическая политика в бывших африканских колониях.

Третья глава называется «Стратегия мягкой силы Французской Республики после деколонизации (французская культура)». Она состоит из двух подразделов, первая часть представляет политику великих держав как противовес статусу доминирующего политического игрока - Франции в бывших африканских колониях. Во второй части третьей главы представлена инструментальная культурная политика Французской Республики.

В заключении обобщены основные результаты и выводы диссертации

FRANCE'S POLICY IN THE FORMER AFRICAN COLONIES IN 1961-1991

Dissertation for the degree of candidate of historical sciences in the specialty 23.00.04 - "International Relations".

The dissertation will be defended on September 30, 2022 at 13:00 at the meeting of the Specialized Council 056 "Political Science and International Relations" of the Higher Attestation Commission of the Republic of Armenia operating at YSU RA (Address: 1 Alek Manukyan St., 0025 Yerevan, RA).

ABSTRACT

The relevance of the topic is determined by the fact that the formation of cooperation mechanisms in the former colonies and the regulation of relations with the new independent states, as well as the mechanisms and methods put forward along this path, which in 1961-1991 were one of the main directions of France's foreign policy, form the basis of its current foreign policy, so their study is important for understanding and evaluating the modern foreign policy strategy of France.

The object of the study is the foreign policy of the French Republic, and the subject is the former African colonies. The purpose of the dissertation is to study the relations of France with the states of North and Central Africa, the former French colonies, the political line in relation to these states and the features of these relations. The dissertation is an attempt at a scientific comprehensive study of French policy in the former African colonies of 1961-1991.

The scientific novelty lies in the fact that for the first time at the same level, the deep mechanisms of France's foreign policy, formed during the period of decolonization, are studied and highlighted in order to serve the national interests of France and realize long-term goals in the international arena. The dissertation is written on the basis of the analysis of archival documents, scientific monographs and articles using documentary analysis, content analysis, historical-comparative, historical-comparative and operational methods.

The main axis and factual basis of the dissertation are French archival materials, some of which are introduced into scientific circulation for the first time.

The dissertation consists of a table of contents, introduction, first, second and third chapters, conclusion and list of references.

The first chapter is entitled "Decolonial features of the French African colonies and the formation of cooperation mechanisms" and consists of two subsections. The first part presents the colonial image of the end of World War II. The second part of the first chapter presents France's goals in North and Central Africa and the formation of cooperation mechanisms.

The second chapter is entitled "French foreign policy strategy in the former African colonies in 1970-1991" and consists of two subsections. The first part presents the foreign policy strategy of France in the Arab states of the Maghreb in the specified period. The second part presents the political line of France in relation to the states of "Black Africa" and economic policy in the former African colonies.

The third chapter is titled "Soft Power Strategy of the French Republic after Decolonization (French Culture)". It consists of two subsections. The first part presents the policy of the great powers as a counterbalance to the status of the dominant political player - France in the former African colonies. The second part of the third chapter presents the instrumental cultural policy of the French Republic.

In conclusion the main results and conclusions of the dissertation are summarized.



The book is divided into a series of chapters, including an introduction, two main and three chapters, a conclusion, and list of references.

The first chapter is entitled 'The French colonial empire and the formation of independent states' and consists of two sub-chapters. The first part presents the historical background of the end of colonial rule. The second part of the first chapter presents French policy in North and Central Africa and the process of decolonization.

The second chapter is entitled 'French foreign policy strategy in the United States, 1945-1967' and consists of two sub-chapters. The first part presents the French policy strategy of France in the Arab states of the Middle East in the specified period. The second part presents the political role of France in relation to the states of (Black Africa) and economic policy in post-war African states.

The third chapter is entitled 'The French foreign policy of the French Republic after Decolonization (French Culture)', it consists of two sub-chapters. The first part presents the policy of the great powers in a contribution to the stand of the developed industrial states - France in the former African colonies. The second part of the third chapter presents the international cultural policy of the French Republic.

In conclusion, the main results and conclusions of the dissertation are summarized.



